

եւ առաքեաց զլոյսն՝ ուրախացուցանելով
զքրիստոնեայս :

Եւ նիրհեալ սակաւ մի մէջ գիշերի՝ նախ
220 հռոմն եհար ժամհար. իսկ կուրճուն սպետրէ
էր ժամհարն եւ յոյժ համեղ եղմն եւ քաղցր
ձայն ածէր, մինչ զի թմրեալ զմայլեցաք. ապա
եւ Հայոց դարկին, փայտեայ, որպէս զանկակ
հնչէր մէջ Յարութեանն, ահեղագոչ եւ ազ-
225 նիւ եղանակաւ. եւ սկսան հսկումն եւ գիշե-
րապաշտօն մինչ ի լոյսն : Եւ առաջնորդն մա-
տոյց պատարազ զատկի օրն վերաբերելով :
Անդ էր տեսանել զբազմութիւն եպիսկոպո-
սաց, վարդապետաց, քահանայից, կրօնաւո-
230 րաց, սարկաւագաց, եւ զգեստուց եւ զար-
դուց, անօթից եւ սպասուց. եւ ինքն զգեցեալ
էր չուրջառ մի սաֆի սիրմայէ, Ստամպօլ
բանած. եւ ասին թէ հազար զուռուչ կունայի.
զի ասին թէ ծանր բան է. եւ այլ զանազան
235 չուրջառնի սէրասէր եւ զէրպապէ քանի հա-
րիւր. եւ այն գիշերն համբեցի կանթեղս եւ
ջահս միայն սուրբ Յարութեանն՝ հինգհա-
րիւր, զատ ի սուրբ Յակոբայ եւ այլ վանօ-
րէից. եւ այս ամէնս Հայոց միայն էր : Զի էր
240 յայնժամ ազգս Հայոց պերճ եւ փարթամ քան
զամենայն ազգս. կարծեմ թէ ի թագաւորաց
ժամանակն այսպէս եթէ եղեալ է :

Նոյնպէս ժամակարգութիւնք եւ գրեանք,
զորս գրել է ավել եւ զորս նորոգել՝ չկայ այլ